Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում,
արձանագրություն N 3,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Կ. Լ. Աթոյան

«01» _____ 2016 թ.

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն աշխատակարգը սահմանում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) գիտական խորհրդի (այսուհետ՝ ԳԽ) ուսումնամեթոդական հանձնաժողովի իրավասությունները, ձևավորման և աշխատանքի կարգը:

1.2. Ուսումնամեթոդական հանձնաժողովը ստեղծվել է ՀՊՏՀ կանոնադրության 18-րդ կետի ենթակետի հիման վրա՝ ՀՊՏՀ մեթոդական և կրթական գործունեության կառավարման և կատարելագործման նպատակով:

1.3. Ուսումնամեթոդական հանձնաժողովի աշխատակարգը հաստատում է ՀՊՏՀ գիտական խորհուրդը: Աշխատակարգում փոփոխություններ և լրացումներ կատարվում են նույն կարգով:

1.4. Ուսումնամեթոդական հանձնաժողովը ՀՊՏՀ խորհրդակցական կոլեգիալ մարմին է և իր գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ գիտության և կրթության նախարարության նորմատիվ իրավական ակտերի, ՀՊՏՀ կանոնադրության և այլ նորմատիվային փաստաթղթերի, ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշումների և սույն աշխատակարգի հիման վրա:

1.5. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ուսումնամեթոդական աշխատանքների տարեկան պլանի հիման վրա, որը հաստատում է ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը:

1.6. Ուսումնամեթոդական հանձնաժողովի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամաններով կամ պրոռեկտորի հանձնարարականներով:

2. Ուսումնամեթոդական հանձնաժողովի խնդիրները

2.1. Ուսումնամեթոդական հանձնաժողովը քննարկում է՝

- ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը,
- դասընթացների առարկայական ծրագրերը,
- ընդհանրական և մասնագիտական գիտելիքներ տվող դասընթացների և մոդուլների ուսումնամեթոդական էլեկտրոնային համալիրներ պատրաստելու և ՀՊՏՀ կայքում տեղադրելու հարցերը,
- առաջավոր փորձի ուսումնասիրման հիման վրա դասավանդման նոր եղանակների և կրթական նորարարությունների ներդրման հնարավորությունները,
- դասավանդման մեթոդների և գիտելիքների ստուգման համակարգերի համապատասխանության հարցերը,
- ուսումնական և մեթոդական գրականության հրատարակմանն առնչվող հարցերը,
- ուսումնական և մեթոդական այլ հարցեր:

2.2. Քննարկում և գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում իրականացվող և նոր բացվող մասնագիտությունների կրթական ծրագրերն ու ուսումնական պլանները:

2.3. Համակարգում է ֆակուլտետների, ամբիոնների և կառուցվածքային այլ ստորաբաժանումների՝ ուսումնամեթոդական նյութերի պատրաստման կամ դրանց կատարելագործման գործունեությունը:

2.4. Մշակում է ուսումնամեթոդական նորմատիվները և հաստատում ուսումնամեթոդական փաստաթղթերի ձևանմուշները:

3. Ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմը և աշխատակարգը

3.1. Ուսումնամեթոդական հանձնաժողովի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը (նախագահ), ուսումնակազմակերպական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնական բաժնի պետը, ուսումնական բաժնի ուսումնամեթոդական աշխատանքների գծով ծառայության ղեկավարը (քարտուղար), որակի ապահովման բաժնի պետը: Հանձնաժողովի մյուս անդամներն ընտրվում են ՀՊՏՀ գիտական խորհրդում և հրամանագրվում են ռեկտորի կողմից: Հանձնաժողովի կազմում փոփոխություններ կատարվում են նույն կարգով:

3.1. Ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերի օրակարգը ձևավորվում է տարեկան պլանում ներառված հարցերից, ռեկտորի առաջարկով կամ ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ: Լրացուցիչ հարցերը օրակարգում ներառվում են «Ընթացիկ հարցեր» բաժնում:

3.2. Ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերն անցկացվում են ինչպես աշխատանքային պլանին համապատասխան, այնպես էլ ըստ անհրաժեշտության, սակայն ոչ ուշ, քան երկու ամիսը մեկ անգամ:

3.3. Օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող նյութերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ որոշումների նախագծերը հանձնաժողովի անդամներին ուղարկվում են էլեկտրոնային փոստով՝ նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:

3.3. Ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների ոչ պակաս 2/3-ի ներկայության դեպքում:

3.4. Ուսումնամեթոդական հանձնաժողովի որոշումները, փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:

3.5. Ուսումնամեթոդական հանձնաժողովը առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում ռեկտորին կամ ՀՊՏՀ գիտական խորհրդին:

3.6. Ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահը ղեկավարում է հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն ՀՊՏՀ գիտական խորհրդում և այլ օղակներում, ստորագրում է ուսումնամեթոդական հանձնաժողովի կողմից հաստատված փաստաթղթերը:

3.7. Ուսումնամեթոդական հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ ներառել հատուկ կարծիք:

4. Ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

- հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ՀՊՏՀ կառուցվածքային ստորաբաժանումներից ստանալու ուսումնական և ուսումնամեթոդական հարցերին առնչվող նյութեր և փաստաթղթեր,
- ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների ցանկացած հարցի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել ուսումնամեթոդական հանձնաժողովի նախագահին, ռեկտորատ և ռեկտորին:

4.2. Ուսումնամեթոդական հանձնաժողովի անդամները պարտավոր են.

- մասնակցել հանձնաժողովի նիստերին, նպաստել սույն կանոնակարգով նախատեսված նպատակների իրագործմանը,
- կատարել հանձնաժողովի որոշումները,
- բարեխղճորեն կատարել հանձնաժողովի նախագահի կողմից տրված հանձնարարությունները: